

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ  
ՀՐԱՄԱՆ

« 09 » մարտ 2026թ. No 1207 - Ա

ՀՆԴԿԱՍՏԱՆԻ ՆԱԲՐՈՍ ՖԱՐՄԱ ՊՎՏ. ՍՊԸ, Ն. Հ. NO. 8 ԿԱԶԻՊՈՒՐԱ,  
ԿՀԵԴԱ, 387411, ԳՈՒՋԱՐԱՏ ԱՐՏԱԴՐՈՒԹՅԱՆ, ԴԵՂԻ ԳՐԱՆՑՄԱՆ ՀԱՎԱՍՏԱԳՐԻ  
ԻՐԱՎԱՏԵՐ՝ ՆԱԲՐՈՍ ՖԱՐՄԱ ՊՎՏ. ՍՊԸ, Ն. Հ. NO. 8 ԿԱԶԻՊՈՒՐԱ, ԿՀԵԴԱ, 387411,  
ԳՈՒՋԱՐԱՏ, ՀՆԴԿԱՍՏԱՆ «ՆՈ-ԴՈԼ ՖԼՅՈՒ ՊԱՐԱՑԵՏԱՄՈԼ, ԿՈՖԵԻՆ,  
ՖԵՆԻԼԷՖՐԻՆ (ՖԵՆԻԼԷՖՐԻՆԻ ՀԻԴՐՈՔԼՈՐԻԴ), ՔԼՈՐՖԵՆԱՄԻՆ  
(ՔԼՈՐՖԵՆԱՄԻՆԻ ՄԱԼԵԱՏ) ԴԵՂԱՀԱՏԵՐ 500ՄԳ+30ՄԳ+5ՄԳ+2ՄԳ; (200/50x4/)  
ՍՏՐԻՊՈՒՄ ԴԵՂԻ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ՎԵՐԱԳՐԱՆՑՈՒՄԸ  
ՄԵՐԺԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2019 թվականի  
փետրվարի 28-ի N 162-Ն որոշման N 1 հավելվածի 7-րդ կետի՝ դեղերի վերագրանցման  
իրականացումը կատարվում է Հայաստանի Հանրապետության կառավարության  
որոշմամբ սահմանված փորձագիտական կազմակերպության կողմից:

Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության «Դեղերի  
և բժշկական տեխնոլոգիաների փորձագիտական կենտրոն» պետական ոչ առևտրային  
կազմակերպության կողմից տրված Հնդկաստանի Նաբրոս Ֆարմա Պվտ. ՍՊԸ, Ն. Հ. No.  
8 Կաջիպուրա, Կհեդա, 387411, Գուջարատ արտադրության, դեղի գրանցման  
հավաստագրի իրավատեր՝ Նաբրոս Ֆարմա Պվտ. ՍՊԸ, Ն. Հ. No. 8 Կաջիպուրա,  
Կհեդա, 387411, Գուջարատ, Հնդկաստան «Նո-Դոլ Ֆյու պարացետամոլ, կոֆեին,  
ֆենիլէֆրին (ֆենիլէֆրինի հիդրոքլորիդ), քլորֆենամին (քլորֆենամինի մալեատ)  
դեղահատեր 500մգ+30մգ+5մգ+2մգ; (200/50x4/) ստրիպում դեղի անվտանգության,  
արդյունավետության և որակի գնահատման վերաբերյալ փորձագիտական թիվ 23892 առ  
27.02.2026թ. բացասական եզրակացության համաձայն՝ որակը չի համապատասխանում  
հաստատված սպեցիֆիկացիային՝ «Կողմնակի խառնուրդներ» կետով՝ լաբորատոր  
փորձաքննության եզրակացություն R-2024-085 տրված 23.10.2024թ.:

Համաձայն «Դեղերի մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 27-րդ մասի 2-րդ կետի՝  
որակը չի համապատասխանում օրենսդրությամբ և այլ իրավական ակտերով

սահմանված պահանջներին, կամ փաստացի որակական և քանակական բաղադրությունը այնպիսին չէ, ինչպես ներկայացվել է գրանցման փաստաթղթերում:

Համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2019 թվականի փետրվարի 28-ի N 162-Ն որոշման N 1 հավելվածի 5-րդ կետի՝ Դեղի վերագրանցումը մերժելը իրականացվում են Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության կողմից՝ իրականացված փորձաքննության արդյունքում տրված փորձագիտական եզրակացության հիման վրա:

Համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2019 թվականի փետրվարի 28-ի N 162-Ն որոշման N1 հավելվածի 52-րդ կետի՝ դեղի վերագրանցման մերժման վերաբերյալ հրամանն ընդունվում է փորձագիտական եզրակացությունը ստանալուց 5 աշխատանքային օրվա ընթացքում:

«Դեղերի մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 16-րդ մասով, 16-րդ հոդվածի 27-րդ մասի 2-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2019 թվականի փետրվարի 28-ի N 162-Ն որոշման N 1 հավելվածի 5-րդ, 7-րդ, 52-րդ կետերով, սահմանված իրավական և վերոգրյալ փաստական հիմքերից ելնելով՝

#### ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝

1. Մերժել Հնդկաստանի Նաբրոս Ֆարմա Պվտ. ՍՊԸ, Ն. Հ. No. 8 Կաջիպուրա, Կհեդա, 387411, Գուջարատ արտադրության, դեղի գրանցման հավաստագրի իրավատեր՝ Նաբրոս Ֆարմա Պվտ. ՍՊԸ, Ն. Հ. No. 8 Կաջիպուրա, Կհեդա, 387411, Գուջարատ, Հնդկաստան «Նո-Դոլ Ֆլյու պարացետամոլ, կոֆեին, ֆենիլէֆրին (ֆենիլէֆրինի հիդրոքլորիդ), քլորֆենամին (քլորֆենամինի մալեատ) դեղահատեր 500մգ+30մգ+5մգ+2մգ; (200/50x4/) ստրիպում դեղի վերագրանցումը Հայաստանի Հանրապետությունում:

2. ՀՀ առողջապահության նախարարության քարտուղարության պետ Ա. Առաքելյանին՝ սույն հրամանը երկու աշխատանքային օրվա ընթացքում պատշաճ ձևով էլեկտրոնային փոստի միջոցով առաքել հայտատուին:

3. Սույն հրամանը ուժի մեջ է մտնում վարչական վարույթի մասնակցին իրազեկելուն հաջորդող օրվանից:

4. Սույն հրամանը կարող է բողոքարկվել «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 70-րդ և 71-րդ հոդվածներով սահմանված կարգով և ժամկետներում՝ վարչական կարգով կամ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքով սահմանված կարգով և ժամկետներում՝ դատական կարգով:

Ա.ԱՎԱՆԵՍՅԱՆ

 Recoverable Signature

X 

---

ԱՆԱՀԻՏ ԱՎԱՆԵՍՅԱՆ

Signed by: AVANESYAN ANAHIT 7103810157